ՆՈՐ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԼԱՁՈՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

(Հիմնադրման 700-ամյակի առթիվ)

Ա. Ս. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլաձորի համալսարանի պատմությունը մեզ չի հասել առանձին պատմագրքով կամ մատենագրական որևէ երկի մեջ։ Նրա պատմությունը ներկայացնողն առաջին հերթին այնտեղ գրված ձեռագրերն ու նրանց հիշատակարաններն են։ Հայերեն ձեռագրերի աշխարհով մեկ սփռված լինելու հանգամանքը, նրանց նկարագրության և հիշատակարանների ժողովածուների բացակայությունը ուսումնասիրողին զրկում են փաստական այդ վիթխարի հարստությունն ամբողջությամբ ձեռքի տակ ունենալու հնարավորությունից։ Ուստի, նորահայտ հիշատակարանները, լրացնելով պակասը, սրբագրում են անճշտությունները, հարստացնում և ամբողջացնում են մեր պատկերացումներն անցյալի մասին։ Այդպես է պատահել նաև Գլաձորի համալսարանի հիմնադրման ժամանակի, տեղի և նրանց առնչվող այլ հարցերի հետ, որոնց և անդրադառնում ենք նորագյուտ հիշատակարանների և հների նորովի քննությամբ։

Ե՞րբ է հիմնադրվել Գլաձորի համալսարանը։ Գ. Հովսեփյանը Գլաձորի համալսարանի հիմնադրման թվականը կապում է «մի շատ թանկարժեք ձեռագրի» հետ, որն իր մեջ պարունակում է նաև Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը» և «գրված է այնտեղ 1280 թվին։ Ձեռագրի ստացողն է «մեծ հռետոր Ներսէս», հիշված է նաև «նուաստ ոգի Նսայի՝ հետևող և աշակերտ սուրբ առնն Աստուծոյ Ներսէս վարդապետի»։ Հենց այս նկատողությունը գրված է Նշեցու ձեռքով»։ Ապա հեղինակը բերում է գրչի գլխավոր հիշատակարանը. «Շնորհաւք եւ ողորմութեամբն Աստուծոյ կատարեցի զտառս աստուածաշունչ, ես փցուն և ապիկար գրող Լուսեր, ի վայելումն սուրբ եւ ամենագով վարդապետին Ներսէսի...։ Ի թուիս Հայոց ՉԻԹ (1280) գրեցաւ»[1]։

Հովսեփյանը տպագրում է նաև հիշատակարանի լուսանկարը Մաշտոցի անվան Մատենադարանի № 1097 ձեռագրից։ Ձեռագրի գլխավոր հիշատակարանում, ինչպես և մյուս հիշատակագրություններում, չի նշվում գրչության վայրը, չկան ո՛չ «Գլաձոր», ո՛չ էլ «Աղբերց վանք» տեղանունները[2]։ Բայց նա տեղանունը նշանակում է շատ ոգոշակի։ Նույն Գլաձորում և նույն այդ ժամանակ գրված է համարում մի այլ ձեռագիր ևս, որի մեջ նույնպես տեղանունը չի հիշվում, բայց կա ստացողը՝ Ներսես վարդապետ։ Հեղինակը ձեռագիրը համարում է «Գլաձորի փառքն ու պատիվը բարձրացնող մի unicum՝ համաշխարհային նշանակությամբ», որովհետև նրա մեջ գտնվող «Ոսկեբերանի և Կյուրեղ Ալեքսանդրացու մեկնությունների բնագրերը անհայտ են մինչև այժմ»[3]։ Գ. Հովսեփյանը, մեր կարծիքով, այսպես է մտածել. 1279 թ. Ներսեսի համար մի ձեռագիր է գրվել Մշո Առաքելոց վանքում և գրչության տեղը նշված է, իսկ 1280 թ.՝ երկու ձեռագիր, որոնցում գրչության տեղերը նշված չեն։ Նշանակում է Ներսեսն այլևս իր հին տեղում, այսինքն՝ Տարոնի Առաքելոց վանքում չի գտնվել, այլ տեղափոխվել է ուրիշ տեղ, իսկ այդ ուրիշ տեղը, այլ աղբյուրներից հայտնի է, որ Գլաձորն է[4]։

---

1 Գ. Հովսեփյան. Խաղբակյանք կամ Պռոշյանք Հայոց պատմության մեջ. Անթիլիաս, 1969, էջ 257։

2 Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. N 1097, էջ 145ա։

3 Գ. Հովսեփյան. Խաղբակյանք, էջ 258։

4 Գ. Հովսեփյան. Մխիթար Սասնեցի (Կերմանոի), 1260—1337. Վաղարշապատ, 1899, էջ 28—29։

Այստեղ աչքաթող է արված մի հանգամանք. 1279 թ. ժողովածուի տարբեր մասերը արտագրող Եսայի և Ստեփանոս գրիչներն իրենց գրած հիշատակարաններում նույնպես գրչության վայրը չեն նշանակել, բավարարվելով ստացող Ներսես վարդապետի անվան հիշատակությամբ։ Տեղը հիշում է ինքը Ներսեսը, այդ նույն ձեռագրի մեջ իր գրած հիշատակարանում։ Եսայի և Ստեփանոս աշակերտների նման է վարվել նաև Լուսեր գրիչը՝ 1280 թ. գրած ձեռագրում։ Իսկ որ նա էլ Առաքելոց վանքում է գրել, երևում է նրանից, որ ձեռագիրը սրբագրել է Եսային, Լուսերի գրածը համեմատելով այն ձեռագրերի հետ, որից արտագրվել է։ Այս նշանակում է, որ նշված երկու ձեռագրերը և Եսային ու Լուսերը գտնվել են միևնույն վայրում, որտեղ և Ներսես վարդապետն էր, այսինքն՝ Մշո Առաքելոց վանքում։ Հետագա ուսումնասիրողները Գլաձորի համալսարանի հիմնադրման թվականի մասին կրկնել են Գ. Հովսեփյանի տեսակետը[5]։

Գ. Հովսեփյանին անծանոթ էր Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մատենադարանի № 1158 ձեռագրի հիշատակարանը, որը հրատարակվել է նախ 1933[6], ապա 1972 և 1980 թթ.[7]։ Ահա այդ հիշատակարանի մեզ անհրաժեշտ մասերը. «Ծանուկ ելեալ կատարեցաւ հոգելից մատեանս այս Մեկնութիւն համարձակախաւս մարգարէին Եսայեա, ի թուականութեանս հնոյ ըստ Հայոց ՉԼ (730+551=1281) և նորոյս շրջանի՝ միոյ հարիւրոյ եւ ՂԷ (197+1084=1281)-ից, ի տանս Որբելեան, ի վիճակիս գերապանծ եւ բարձրապատիւ սուրբ ուխտին Հաղբատա, ի գաւառս Գուգարացոց, ի սուրբ եւ ի հռաշազարդ մենաստանս Մշակավանք կոչեցեալ, ի խնդրոյ երիցս երանեալ առն Աստուծոյ, աստուածազարդ րաբունոյն և անյաղթ վարժապետին Ներսիսի, որ է ի Տարաւն գաւառի: Վասն զի ի ձեռն նամակի, ի վերագրեալ նահանգէն խնդրեաց զսա եւ զայլս բազումս գծագրել իմոյ եղկելի անձինս, որ կոչիմս Բարսեղ, եւ մեր ի Նորին խնդրոյ դժեցաք զսա փանաքի և անյարմար տառիւ, զոր տէր Աստուած վայելել տացէ նմա զսա ի յաւուրս անթիւս և յամս հազարաւորս, ի շահ եւ ի յաւգուտ իւրոյ անձինն եւ նորին աշակերտելոցն, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ...

Արդ աղաչեմ... յիշեսջիք ի Տէր նախ զերանեալն այն և ցանկալին հրեշտակաց զպետն րաբունեաց զՆերսէս ստացող գրոցս, ընդ նմին և զարքեպիսկոպոսն զտէր Յովհաննէս՝ զաթոռակալն գերահռչակ սուրբ ուխտին Հաղբատա, որ զաւրինակս շնորհեաց... Ընդ նմին եւ զՅովհաննէս րաբունի՝ աշակերտ նորուն Ներսիսի, որ առ մեզս է, եւ գնաց ի մէնջ եւ եբեր զաւրինակս առ մեզ աւուր միոյ ճանապարհ, բարձեալ ի վերա թիկանց ողինն իւրոյ...

Ի մարգաց ԺԳ (13) սկիզբն եղեւ, ի նաւասարդի ԻԱ (21) կատարեցաւ»[8]։

Ուրեմն, 1281 թ. Ներսես րաբունապետը Տարոնից, ուր գտնվում էր իր դպրոցը, Հովհաննես վարդապետին հանձնարարական նամակով ուղարկել է Մշակավանք, գրիչ Բարսեղի մոտ և խնդրել մի քանի ձեռագրերի ընդօրինակություն։ Հովհաննեսն այդ ձեռագրերից մեկը՝ Դավիթ Քոբայրեցու Եսայի Մարգարեի մեկնությունը Հաղբատից բերում է Մշակավանք, իսկ Բարսեղը արտա-

5 Ա. Մովսիսյան. Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության. Երևան, 1958, էջ 161—163։ Ս. Ավետիսյան. Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը. Երևան, 1971, էջ 11։ Լ. Խաչերյան. Գլաձորի համալսարանը. Երևան, 1973, էջ 33։ Ա. Աբրահամյան. Գլաձորի համալսարանը.—«Սովետական Հայաստան», 30 սեպտեմբերի 1969։ Այստեղ ընդունում է 1270 թ., իսկ «Գլաձոր, «երկրորդ Աթենք պանծալի» («Գարուն», 1978, էջ 79—82) հոդվածում և հաջորդ երկերում՝ 1280 թ.։

6 «Սիոն». Երուսաղեմ, 1933, էջ 416։

7 Ն. Պողարյան. Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց. հ. Զ, Երուսաղեմ, 1977, էջ 91—93։ Ա. Մաթևոսյան. Հիրավի, երբ և որտեղ է հիմնադրվել Գլաձորի համալսարանը.—«Գարուն», 1980, № 7, էջ 55—59։

8 «Սիոն». Երուսաղեմ, 1933, էջ 416։

դրում է այն մոտ երկուս ու կես ամսում՝ սկսում է 1281 թ. նոյեմբերի 19-ին և ավարտում 1282 թ. հունվարի 30-ին[9]։

Ներսես Մշեցու համար ուրիշ ի՞նչ ձեռագրեր է ընդօրինակել Բարսեղը, Հովհաննեսը սպասե՞լ է նրանց ավարտին, թե վերադարձել է Տարոն, հայտնի չէ։ Սակայն ավարտած ձեռագրի այս հիշատակարանը մեզ ստույգ տեղեկություն է տալիս Ներսես վարդապետի Առաքելոց վանքում գտնվելու ժամանակի մասին՝ Ներսես Մշեցի բարունապետի գլխավորած Հայոց վարդապետարանը 1281 թ. աշնանը դեռևս գտնվում էր Տարոնի Թարգմանչաց կամ Առաքելոց վանքում։ Իսկ այս նշանակում է, որ Ներսես Մշեցին այնտեղ էր նախ ամբողջ 1280 թ. և 1281 թ. մեծ մասը, հետևաբար այդ ժամանակ (1281 թ. վերջերին) Գլաձորի մասին խոսք լինել չի կարող։ Ուրեմն՝ Լուսեր գրիչը ձեռագիրը Գլաձորում չի գրել և նրա հիշատակարանը չի կարող հիմք ծառայել Գլաձորի հիմնադրման ժամանակը որոշելու համար։

Մխիթար Սասնեցու Վարքից իմանում ենք, որ «Մեծ վարդապետն Հայոց Ներսէս ի հալածմանէ անաւրէն և ժանտաբարոյ ազգէն մարաց եկեալ ի սուրբ ուխտէն Ղազարու աշակերտաւն իւրով Եսայեաւ..., ի գաւառն Քաջբերունեաց ամ մի բովանդակ աստ և անդ շրջագայեալ և վարդապետական քարոզութեամբ զամենեսեան լուսաւորեաց զկարգաւորս և զաշխարհականս։ Եւ տեսեալ զերկիրս Քաջբերունեաց ագիտութեամբ վարանեալ առանց վարդապետական ուսման եւ յոյժ քաջալերեաց զկրաւնաւորսն հետեւել աստուածաշունչ գրոց գիտութեան, եւ ինքն գնաց յերկիրն Սիւնեաց, ի սուրբ ուխտն Գլաձորոյ»[10]։ Ուրեմն, Առաքելոց վանքից Ներսես Մշեցու հարկադրաբար դուրս գալու և Գլաձորում հաստատվելու միջև ընկնում է շուրջ մի տարի ժամանակ, ընդ որում, այդ ժամանակի կեսը 1281 թ. վերջին ամիսները պետք է լինեն, իսկ մնացածը հաջորդ՝ 1282 թ. սկզբի ամիսներ։ Հետևաբար, Ներսեսը 1282 թ. է գնացել Վայոց ձորի Գլաձորի վանք։

Ահա այդ թվականը հաստատող մի այլ փաստ. Մխիթար Սասնեցին, որ սովորում էր Քաջբերունիքի Մեծոփա վանքի դպրոցում, Ներսես վարդապետի մեկնելուց հետո իր դասընկերներ Ստեփանոսի և Հովհաննեսի հետ գնում է «առ մեծ վարդապետն Ներսէս և աշակերտեալ առ նմա զամս երիս։ Եւ յետ երից ամաց փոխեցաւ մեծն Ներսէս յԱստուած»[11]։ Ակնհայտ է, Մխիթար Սասնեցին Ներսես բարունապետի մոտ սովորում է երեք տարի՝ մինչև բարունապետի մահը։ Ներսես բարունապետը մահացել է 1284 թ.։ Հետևաբար Մխիթար Սասնեցու՝ նրա մոտ սովորած երեք տարիներն են Ներսեսի մահվան տարին՝ 1284-ը, նրանից առաջ՝ 1283 և սրա նախորդ 1282 թվականները։ Նշանակում է Մխիթարը Գլաձոր է գնացել 1282 թ. կեսերին։ Կրկին ստացվում է, որ Ներսես Մշեցին 1281 թ. վերջերին թողել է հայրենի Առաքելոց վանքը, իսկ հաջորդ (1282) տարվա կեսերին անցել Վայոց ձոր։

Ահա և երրորդ փաստը. Ստեփանոս գրիչը Ներսես բարունապետի համար 1282 թ. ավարտում է մի ձեռագիր, որտեղ դարձյալ տեղը չի նշում, սովորության համաձայն բավարարվում է Ներսես բարունապետի անվան հիշատակությամբ։ Ձեռագիրը գրված է «ի ծնունդ և ի սնունդ» սովորողների։ Սրբագրված է Եսայի Նչեցու ձեռքով։ Գրչության վայրում հիշվում է Մովսես կրոնավորը. «որ ամենայն մարմնավոր հանգստեմբ սպասաւորեաց մեզ»[12]։ Այս նշանակում է, որ Ստեփանոս գրիչը, պատվիրող Ներսես վարդապետը և սրբագրող Եսային 1282 թ. այլևս իրենց սեփական հարկի տակ, այսինքն՝ Առաքելոց վան-

---

9 Բ. Թումանյան. Հայ աստղագիտության պատմություն. հ. Ա, Երևան, 1968, էջ 273։ Չլ տարին համընկնում է 1281 թ. հունվարի 10-ից 1282 թ. հունվարի 9-ին։

10 ՄՄ, ձեռ. № 4517, էջ 371բ-372ա։ Հմմտ. Գ. Հովսեփյան. Մխիթար Սասնեցի, էջ 28—29։

11 Մխիթարի մի այլ վարքագիր գրում է, որ Մխիթարը գնաց «...ի գաւառն կոչեցեալ Վայոց ձոր, ի վանսն, որ այժմ կոչի Գլաձոր, առ գերակատար և սուրբ վարդապետն Ներսէս և հացեալ անդ ընդ նմա ամս երեք» (Գ. Հովսեփյան. Մխիթար Սասնեցի, էջ 28—29)։

12 ՄՄ, ձեռ. № 49, էջ 338ա։

քում չէին, այլ մի ուրիշ վանքում, որի միաբան Մովսեսը հոգում է նրանց մարմնավոր հոգսերը, նրանց սպասավորում իր վանքում։ Այս Մովսեսն է, անշուշտ, որին հիշում է Հովասափ գրիչը տասը տարի հետո, Գլաձորի համալսարանի բարունապետ Եսայի Նչեցու համար Գլաձորում գրած մի ձեռագրում, որպես «մեր մեծ առաքինի Մովսէսի»[13]։ Այս ևս ցույց է տալիս, որ 1282 թ. Ներսես բարունապետի դպրոցը գործում էր նոր տեղում, Գլաձորում։

1283 թ. արդեն այնտեղ էր Մատթեոս Կիլիկեցին կամ Մլիճեցին, և ձեռագիր էր ընդօրինակում իր ընկերների հետ, որն ավարտում է 1284 թ. և թողնում իր նշանավոր հիշատակարանը, ուր առաջին անգամ հիշում է Վայոց ձորի Աղբերց վանքը՝ որպես Ներսես բարունապետի դպրոցի ապաստարան։

Ամփոփենք.

1282 թ. կեսերին Ներսես Մշեցի բարունապետն իր դպրոցը հաստատում է Վայոց ձոր գավառի Աղբերց վանքում, որը հետագայում մականվանվում է Գլաձորի վանք, Գլաձորի համալսարան։ Ուրեմն. Գլաձորի համալսարանի հիմնադրման ժամանակը 1282 թ. է, իսկ Աղբերց վանքից կամ Գլաձորից մեզ հայտնի առաջին ձեռագիրը Մաշտոցի անվան Մատենադարանի № 49 մատյանն է՝ Դիոնիսիոս Արիսպագացու «Մատենագրութիւնքը», գրված գրիչ Ստեփանոսի ձեռքով, «Հրամանաւ գիտնական և արդիւնական հռետորի Ներսիսի, ի ծնունդ և ի սնունդ մաքրափայլ որդոց մոր մերո Սիոնի... ի թիւս ՉԼԱ (1282) Հայկազեն տումարիս»[14]։

Ա. Աբրահամյանը Երուսաղեմի վերոհիշյալ ձեռագրի հիշատակարանին անդրադառնում է «Գլաձորի համալսարանը» մենագրության մեջ։ Նա գրում է. «Առաջին հայացքից թվում է, թե դա հիմք է տալիս Գլաձորի հիմնադրման տարեթիվը 1280-ից տեղափոխելու 1281 թվականը», և բերելով թվականին վերաբերող հատվածը, շարունակում է. «...Առաջինը տալիս է հայկական մեծ թվականը (այսինքն ՉԼ=730+551=1281, ինչպես «Ցուցակում» նշում է Ն. Պողարյանը—Ա. Մ.), իսկ երկրորդը հայկական փոքր կամ Սարկավագաղիր կոչվող թվականը (ՃՂԷ=197+1084=1281—Ա. Մ.)։ Ամսաթվերը շարժական տոմարով են, հետևապես մարգաց 13-ը կհամապատասխանի նոյեմբերի 19-ին, իսկ նավասարդի 21-ը հաջորդ տարվա հունվարի 30-ին։

Ձեռագրի գրության թվականի համար կարևոր տոմարական տվյալը հայոց փոքր թվականի հիշատակությունն է. «Նորոյս շրջանի՝ միոյ հարիւրոյ եւ Ղէ-ից (197)»։ Հայտնի է, որ փոքր թվականը վերծանելիս, եթե դեպքը տեղի է ունեցել օգոստոսի 11-ից հետո, գումարում ենք 1083, եթե նրանից առաջ է, ապա 1084»[15]։

Քանի որ ձեռագիրը ավարտվել է հունվարի 30-ին, իսկ դա օգոստոսի 11-ից առաջ է, ուրեմն պետք է գումարենք ոչ թե 1083, այլ՝ 1084, այսինքն՝ 197+1084=1281, որը համապատասխանում է նաև Հայոց մեծ թվականին՝ ՉԼ+551=1281։ Սակայն հակառակ իր ամբողջ տեսությանը և բերած օրինակներին, Ա. Աբրահամյանը նկատի է առնում ոչ թե ձեռագրի ավարտման օրը, այլ գրել սկսելու օրը՝ նոյեմբերի 18-ը, որն ընկնում է օգոստոսի 11-ից հետո, և 197-ին գումարելով 1083, ստանում է 1280[16]։ Եթե նույնիսկ 1280 թ. նոյեմբերի սկիզբն էլ համարենք Առաքելոց վանքից Ներսես Մշեցու հեռանալու ժամանակը, միևնույն է, 1280 թ. Գլաձորի հիմնադրման ժամանակը չի կարող լինել, քանի որ 1280 թ. նոյեմբերից մինչև 1281 թ. կեսերը նա Քաջբերունիքում էր գտնվում։ Բայց իրականում «դեպքը տեղի է ունեցել օգոստոսի 11-ից ա-

---

13 ՄՄ, ձեռ. № 1363, էջ 218ա։

14 ՄՄ, ձեռ. № 49, էջ 338ա։

15 Ա. Աբրահամյան. Գլաձորի համալսարանը. Երևան, 1983, էջ 37—39։ Հմմտ. Նույնի՝ Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը. Երևան, 1956, էջ 82—85։ Նույնի՝ Հայ գիր և գրչություն. Երևան, 1973, էջ 115, նաև՝ Հայ գրի և գրչության պատմություն. Երևան, 1959, էջ 269։

16 Ա. Աբրահամյան. Գլաձորի համալսարանը, էջ 37։

ռաջ», այն է՝ հունվարի 30-ին, երբ ստեղծվել է ձեռագիրը, գրվել հիշատակարանը, որն ազդարարել է ձեռագրի ծնունդը, և ժամանակը նշվել է Հայոց մեծ ՉԼ (730+551)=1281 և Հայոց փոքր ՃՂԷ (197+1084)=1281 (վերջինիս գումարելով 1084) թվականներով։

Այս հաշվարկը հաստատվում է նաև Բ. Թումանյանի[17] և Հ. Բաղալյանի[18] տոմարական աղյուսակ-ուղեցույցներով, ուր հայկական մեծ թվականի ՉԼ (730)-ն համընկնում է 1281—1282 թթ., ավելի որոշակի՝ շարժական տոմարով մարգաց ԺԳ-ն համընկնում է 1281 թ. նոյեմբերի 19-ին, նաստասարդի ԻԱ-ն՝ 1282 թ. հունվարի 30-ին։

Այս փաստերից ելնելով պետք էր եզրակացնել, որ ձեռագիրը գրվելուց մեկ տարի հետո Մշեցին այլևս Տարոնում չէր, այլ՝ Աղբերց վանքում։

Այնուհետև Ա. Աբրահամյանը գրում է. «Ամիր Հասանի կին Թաճերի պատվերով Հովհաննես գրիչը 1282 թ. ընդօրինակել է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» գիրքը։ Գրչության վայրն է հիշում ոչ թե Գլաձորը կամ Աղբերց վանքը, այլ Թանատը»[19]։ Զարմանալու ոչինչ չկա, երբ գրիչը հիշատ է դրել գրչության վայրը։ Ա. Աբրահամյանը տեղեկությունը վերցրել է Գ. Հովսեփյանից, տեսել է նաև ձեռագիրը։ Դա Մաշտոցի անվան Մատենադարանի № 5135 ձեռագիրն է, որի մասամբ պատռված թվականը խոշոր երկաթագրով գրված է հիշատակարանի վերջում։

Գ. Հովսեփյանը, քննելով ձեռագիրը, թվականի մասին արել է հետևյալ դիտողությունը. «Հիշատակարանի վերջում մեծ տառերով գրված է. «Թվկ. ՉԼ»,—տարաբաղդաբար միավորի միայն կեսը մնացած, ինչպես և Լ-ի պոչը կտրված. միավորը՝ մնացորդից դատելով, կարող է Ա, Ե կամ Է լինել, սակայն առաջինը (այսինքն՝ Ա—Ա. Մ.) կարելի չէ, որովհետև 1282 թվին կենդանի էր դեռևս Պողոս մեծ իշխանը (որի անունը հարսը՝ Թաճերը, չէր կարող չհիշել—Ա. Մ.), հնարավոր չէ երրորդը (այսինքն՝ Է), որովհետև մեռած էր արդեն Հակոբ կաթողիկոսը (գրության ժամանակի կաթողիկոսը—Ա. Մ.), այսպիսով հիշատակարանի գրության ժամանակը կարող ենք ճշտիվ նշանակել ՉԼԵ (1286) թիվը»[20]։

Շրջանցելով թվականի՝ Գ. Հովսեփյանի վերծանությունը և այդ մասին նրա կարծիքը, Ա. Աբրահամյանը ներկայացնում է իր վերծանությունը. «Գրչության թվականը մեծ տառերով երևում է՝ «թվկ ՉԱ» (Հովսեփյանի մոտ՝ «ՉԼ»—Ա. Մ.)։ Հովսեփյանը Ա տառի առաջին սյունագիծը համարելով Լ տառի մնացորդը, իսկ երկրորդ սյունագիծը՝ Ե, վերականգնում է «ՉԼԵ=1286»։ Սեզ թվում է հիշատակարանի թվականը պետք է վերծանել ՉԱ, որը պարզ երևում է և պետք է ընդունել, որ գոչի անուշադրության հետևանքով Լ տառնավոր տառը դուրս է ընկել»[21]։ Որ «ՉԱ» (1252) սխալ է, նա պատճառաբանում է Լևոն III թագավորի (1270—1289) և Հակոբ Ա կաթողիկոսի (1267—1286) անունների հիշատակությամբ։ Այնուհետև գրում է. «Եթե ճիշտ է թվականի մեր վերծանությունը, այդ դեպքում Գլաձորում ձեռագիրը գրվել է նրա հիմնադրման երկրորդ տարում»։ Ինչպես տեսնում ենք, Թանատի փոխարեն նա գրում է «Գլաձոր» անունը, որ չկա ձեռագրում և եզրահանգում. «Հետաքրքիր է, որ սա (այսինքն Թանատում գրված ձեռագիրը—Ա. Մ.) Գլաձորի Համալսարանի գոյության ընթացքում գրված միակ ձեռագիրն է, ուր Գլաձորը հիշվում է Թանատ անունով»[22]։

Հիշատակարանի թվականի պահպանված մասից երևում է, որ տասնավորից մնացած երկար գիծը կարող է միայն Լ լինել, ինչպես կարդացել է

17 Բ. Թումանյան. Հայ աստղաբաշխության պատմություն. հ. Ա, Երևան, 1968, էջ 278։

18 Հ. Բաղալյան. Օրացույցի պատմություն. Երևան, 1970, էջ 374։

19 Ա. Աբրահամյան. Գլաձորի համալսարանը, էջ 39։

20 Գ. Հովսեփյան. Խաղբակյանք, էջ 77։

21 Ա. Աբրահամյան. Գլաձորի համալսարանը, էջ 39։

22 Նույն տեղում, էջ 41։

Գ. Հովսեփյանը, իսկ նրանից հարյուր քսան տարի առաջ՝ Ղ. Փիրղալեմյանը Կտուց անապատում, որտեղ այն ժամանակ պահվում էր ձեռագիրը, և որի ո՛չ թերթն էր պատռված և ո՛չ թվականը խաթարված։ Ղ. Փիրղալեմյանը արտագրում է հիշատակարանը և թվականը, որ է «ՉԼԵ=1286»[23]։ Այլևս թվականի նոր վերծանության կարիք չկա, ուրեմն ձեռագիրը «Գլաձորի հիմնադրման երկրորդ տարում» չի գրվել և ոչ էլ «միակ ձեռագիրն է, ուր Գլաձորը հիշվում է Թանաա անունով»։

Այս ամենից հետո պարզ է դառնում, որ Ներսես Մշեցին իր վարդապետարանով Վայոց ձորում հաստատվել է 1282 թ. կեսին, և դրանից առաջ Գլաձորի համալսարանի մասին եղած խոսակցությունները հիմք չունեն։

Իսկ մինչև երբ է գոյատևել Գլաձորի համալսարանը։ Գ. Հովսեփյանը տարօրինակ սկիզբ և վախճան ունեցող վանք է համարում Գլաձորը, որը հանկարծ երևան է գալիս XIII դարի 80-ական թթ. սկզբին, որպես Արևելյան Հայաստանի մտավոր կենտրոն և չքանում է անհայտության մեջ հաջորդ դարի կեսերին[24]։ Վանքը չքանում է անհայտության մեջ, բայց համալսարանը շարունակում է իր եռթը դարերի միջով։ «Մեծ փիլիսոփայն Հայոց Յովհաննէս Որոտնեցին», երբ իր աշակերտ Գրիգորին Սեպուհ լեռան վրա «առ գերեզմանն սուրբ Լուսաւորչին առնէր վարդապետ», բերեց «յաշխարհն Սիւնեաց, և զկնի մահուանն իւր էտ հրաման նստել յաթոռ մեծ համալսարանին Երնջակայ և րաբունապետ Հայոց Մեծաց»։ Ուրեմն, Որոտնավանքում տեղավորված համալսարանի րաբունապետ Հովհաննես Որոտնեցին իրեն համարում է Երնջակի մեծ համալսարանի րաբունապետ, և իրեն փոխարինողը դառնալու էր Երնջակի համալսարանն է ղեկավարելու և կատարելու է Հայոց Մեծաց, այսինքն Մեծ Հայաստանի րաբունապետի պարտականությունը։

1338 թ., Գլաձորի համալսարանի րաբունապետ Եսայի Նչեցու մահից հետո, երկրորդ րաբունապետը՝ Տիրատուր Կիլիկեցին, համալսարանը տեղափոխում է Հերմոնի վանք, Օրբելյանների տիրույթում, որտեղ «ի վարժապետութեան ընդհանուր հայկազեանս սեռի, և եւիցս երանեալ հռետորի Տիրատուր առ ձայնելոյ... ի վարժս կրթութեան» են պարապում սաները «որպէս մանուկ առ մայր, և որպէս զաւակ առ ծնող...»[25]։

1337 թ. Բուրթելի թոռ և Իվանեի որդի Հովհաննես Որոտնեցին քահանայական աստիճան է ստանում Եսայի Նչեցուց, իսկ 1347 թ. Հերմոնում՝ վարդապետական աստիճան Տիրատուր Կիլիկեցուց։ 1356 թ. վերջինիս մահից հետո, համալսարանը տեղափոխում է հայրենի Որոտնա գավառ և ղեկավարում է 28 տարի՝ մինչև 1384 թ.։ Երկու տարի թուրքերից հալածական թափառում է Սյունիքում։ 1386 թ. հանգրվանում է Նախիջևանի Ապրակունյաց վանքում, ուր և մահանում է։

Եսայու համալսարանի նոր րաբունապետ Գրիգորը 1391 թ. համալսարանը տեղափոխում է Տաթևի վանք (որտեղից էլ Տաթևացի մականունը) և լենկթեմուրյան արշավանքների ժամանակաշրջանում վարում է րաբունապետությունը մինչև իր մահը (1410 թ.)։ Նրան փոխարինում են Մխիթար րաբունապետը մինչև 1425 թ. և Եզեկիել վարդապետը՝ մինչև 1435 թ., երբ «...վասն աւերման հրեշտակաբնակ աթոռոյն մեր Եւստաթէի սուրբ առաքելոցն, զի բնաջինջ աւերք ածին և առհասարակ ղտներն այրեցին և զստացուածքն զամենայն կողոպտեցին, և միաբանք մերովք փախստական և ցանուցիր եղաք աշխարհս Վրաց ատուածապարգև իշխանաւս մեր և ամենայն աւրհնութեանց արժանաւոր Բէշքենաւ, և ազատաւք, և ժողովրդաւք»[26]։

«Եսայու մեծ համալսարանը», հիմնադրվելով 1282 թ. Գլաձորում, ա-

23 Ղ. Փիրղալեմյան. Նշխարք պատմութեան Հայոց. ձեռ. № 6273, էջ 50ա—50բ։

24 Գ. Հովսեփյան. Խաղբակյանք, էջ 151։

25 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան. մասն Ա, Երևան, 1955, էջ 103—104, ծան.։

26 Նույն տեղում, էջ 469, 470։

վարտեց իր գոյությունը 1435 թ. Տաթևում, օտար նվաճողների ավերածությունների հետևանքով։ Ավելի քան հարյուր հիսուն տարի Սյունյաց լեռներից հայոց համալսարանը, հարյուրավոր սաների և նրանց բաց արած դպրոցների միջոցով, որոնք սփռված էին Գուգարքից Կիլիկիա, Բարձր Հայքից Հարավային Հայաստան, լուսավորում էր Հայոց աշխարհը։

Գլաձորի համալսարանի տեղի մասին կոյություն ունի երկու տեսակետ։ Առաջին. Ներսես Մշեցու բարձրագույն դպրոցը Առաքելոց վանքից հետո տապաստանել է Վայոց ձոր գավառի Աղբերց վանքում, որը մականվանվել է Գլաձոր։ Այս տեսակետը հայտնել են Գ. Հովսեփյանը և Ս. Բարխուդարյանը[27]։ Երկրորդ տեսակետն առաջ է քաշել Ե. Լալայանը, ըստ որի Գլաձորը Թանահատն է։ Նրան հետևում են Ա. Ավետիսյանը, Ի. Ղարիբյանը, Ա. Աբրահամյանը[28]։

Նախ դիմենք սկզբնաղբյուրներին (որոնք տեղում գրված ձեռագրերն են և նրանց հիշատակարանները)։ Առաջին վկայությունը, ուր հիշվում են այն գավառը և վանքը, ուր տեղափոխվել է Ներսես վարդապետը, 1283 թ. սկսված և 1284 թ. ավարտված ձեռագիր հիշատակարանն է, որ գրել է Կիլիկիայի Մլիճի վանքից այստեղ սովորելու եկած Մաթևոս քահանան.

...Որոյ եկեայ յայս գաւառի,
Որում անուն Վայձոր կոչի,
Հուպ ի շիրիմքն Սիւնեցի,
Ի յԱղբերց վանս մենաստանի—
Յերկրորդ Աթէնս պանծալի,
Առ ոտքս հայր մեր Ներսէսի
Եւ բաբունեաց վարժապետի...[29]։

Մաթևոս Կիլիկեցին նշում է Վայոց ձորում երկու տեղանուն՝ Աղբերց վանք մենաստանը, որտեղ տեղավորված է բաբունյաց վարժապետ Ներսեսը, և Սյունեցու շիրիմը, որի մոտակայքում գտնվում է Աղբերց վանքը՝ իր նոր բնակիչներով։

Նախ ծանոթանանք Աղբերց վանքին։ Այս հուշարձանին առաջին անգամ հանդիպում ենք այս և հետագայի՝ նույն տեղում գրված ձեռագրերի հիշատակարաններում։ Աղբերց վանքից հաջորդ ձեռագիրը 1291 թ. է։ Ներսես վարդապետի աշակերտներից Հովհաննեսը մի ձեռագիր է գրում «ի մենաստանն, որ կոչի Աղբերց վանս և մականուն Գլաձոր, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփանոսի, ի վարժապետութեան գիտնական և արդիւնական մեծ հռետորի Յեսայ»[30]։

Ուրեմն, Աղբերց վանքը մականվանվել է Գլաձոր, ասել է թե Գլաձոր և Աղբերց անունները պատկանում են մի վանքի։ Այստեղից իմանում ենք նաև, որ Աղբերց-Գլաձոր վանքը կառուցված է հանուն սուրբ Ստեփանոսի։ Բայց ո՞ր սուրբ Ստեփանոսի։ Հիշատակարանները պատասխանում են նաև դրան. «Գրեցաւ սա ի գաւառիս կոչեցեալ Վայոց ձոր, ի վանս Գլաձոր, ընդ հովանեաւ սուրբ Նախավկայիս, ի վարժապետութեան Եսայա...»[31] և այլն։ Ուրեմն Աղբերց վանք-

27 Գ. Հովսեփյան. Խաչբակյանք, էջ 235, 251։ Ս. Բարխուդարյան. Դիվան հայ վիմագրության. Վայոց ձոր. Երևան, 1967, էջ 72։

28 Ե. Լալայան. Շարուր-Դարալագյազի գավառ.—«Ազգագրական հանդես», Գ, 12, Թիֆլիս, 1905, էջ 271։ Ա. Ավետիսյան. Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը, էջ 14։ Ի. Ղարիբյան. Գլաձորի համալսարանի հնագիտական պեղումները.—«Բանբեր Երևանի պետական համալսարանի», 1971, № 2, էջ 169։ Ա. Աբրահամյան. Գլաձոր, երկրորդ Աթենք պանծալի, էջ 79—82։ Նույնի՝ Գլաձորի համալսարանի հիմնադրության թվականի և տեղի մասին.—«Պատմա-բանասիրական հանդես», 1982, № 2, էջ 164։

29 Հ. Տաշյան. Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա. Վիեննա, 1895, էջ 1039։

30 Ղ. Ալիշան. Սիսական, էջ 131։

31 ՄՄ, ձեռ. № 6273, թ. 61։

Գլաձորը կառուցված է Ստեփանոս Նախավկայի, այսինքն հանուն Քրիստոսի առաջին նահատակ Ստեփանոսի անունով։ Գլաձորի սան Հունանը այս անունը լրիվ է հիշում. «...ի Ջորս վայրց, ի յանապատիս մեծափառ Գայլիձոր կոչեցեալ, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփանոսի Նախավկայի»[32]։ Ստեփանոս Նախավկայի անունը Գլաձոր անվան կից հիշվում է «Ս. Ստեփանոս», «Ս. Նախավկա», «Ս. Ստեփանոս Նախավկա» ձևերով։ Գլաձորից մեզ հայտնի բոլոր ձեռագրերը գրված են «...ի վանս Գլաձոր, ընդ հովանեաւ Ս. Ստեփանոսի», որը նշանակում է, թե նրանք արտագրված են Գլաձոր-Աղբերց-Ս. Ստեփանոս Նախավկայի վանքում։

1284 թ. Ներսես Մշեցին վախճանվում և թաղվում է Աղբերց վանքում, ուր հիշվում է «դամբարան սուրբ վարդապետին Ներսիսի»։ 1338 թ. սկզբին Գլաձորում է թաղվում նաև Եսայի Նչեցի րաբունապետը։

Գլաձորի մասին մատենագրական հնագույն աղբյուրը Վարդան Արևելցու «Աշխարհացոյցն» է, ուր կարդում ենք. «Վայոց ձոր Եղեգաց ձորն է, ուր կայ կենսաբեր Սուրբ Նշանն, եւ Գայլիձոր, որ աթոռն է և վարժարան սուրբ վարդապետացն մերոց... Եւ անդ է ամենամաքուր նշխարն Սիւնեաց տէր Ստեփանոսին, եղեալ ի վանս Թանահատին»[33]։

Այստեղ հիշվում են նույն հուշարձանները. 1. «Գայլեձոր, որ աթոռն է և վարժարան սուրբ վարդապետացն մերոց», 2. «նշխարն Սիւնեաց տէր Ստեփանոսի» և 3. որը դրված է «ի վանս Թանահատի»։ Վերջինս ավելի որոշակի է դարձնում Սյունեցու շիրիմի տեղը՝ Թանատի վանքը։ Եվ վերջապես, հիշվում է «կենսաբեր Ս. Նշանը»։ Այժմ ծանոթանանք այս վանքերին և սկսենք Թանատից։

Վայոց ձորի Թանատի կամ Թանատեի վանքի մասին հնագույն տեղեկությունները կապվում են 735 թ. սպանված Սյունյաց Ստեփանոս եպիսկոպոսի անվան հետ։ Ըստ Որբելյանի Ստեփանոս Սյունեցու սպանությունից հետո «բարձեալ զսուրբ մարմին նորա տարան յԱրկազուն սենեակն, և անտի ի Թանատի վանքն և անդ թաղեցին փառաւորապէ»[34]։ Մխիթար Այրիվանեցին, որ նախորդ աղբյուրների հիման վրա հորինել էր Սյունեցու վկայաբանությունը, գտնում է, որ Թանատում «արարեալ տապան քարեղէն, յոր եդեալ զսուրբն ի հանգիստ փոխեցին... իսկ բնակիչք տեղւոյն շինեցին խորան ի վերայ հանգստարանի սրբոյն»[35]։ Վերջերս կատարված պեղումների ժամանակ բացվել է Թա-

---

32 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Ս. Խաչիկյան. Երևան, 1950, էջ 261։

33 Վարդան Վարդապետ. Աշխարհացոյց, քննական հրատարակություն Հ. Պերպերյանի. Փարիզ, 1960, էջ 15։ Նկատենք, որ 1271 թ. առաջ գրված սույն երկի մեջ «կենսաբեր Սուրբ Նշանն եւ Գայլեձոր, որ աթոռն է և վարժարան սուրբ վարդապետաց մերոց» հատվածը ընդմիջարկություն է, կատարված XIV դարի սկզբին։ Մյուս մասը առնված է Ստեփանոս Սյունեցու վկայաբանությունից։ 1282 թ. առաջ Գլաձորը չէր հիշվի, 1293 թ. առաջ՝ Ս. Նշանը։ Իսկ որ այն ընդմիջարկվել է մինչև 1338 թ., այսինքն՝ Գլաձորի համալսարանի գոյության պայմաններում, երևում է «ուր կայ... եւ Գայլեձոր, որ աթոռն է և վարժարան վարդապետաց մերոց» ներկա ժամանակով գրված նախադասությունից։ Համալսարանը Հերմոնի վանք տեղափոխվելուց հետո (1338 թ.) այդպես չէին գրի։ Ուրեմն ընդմիջարկողը ժամանակակից է եղել Գլաձորի համալսարանին։

34 ՄՄ, ձեռ. № 6283, թ. 242—243։ Նույնն է Կիրակոսի մոտ, միայն «եւ աշակերտք նորա բարձեալ զմարմին տարան յԱրկազեան սենեակն և անտի ի Թանատի վանքն և թաղեցին ի դուռն եկեղեցւոյն» (ՄՄ, ձեռ. № 7433, էջ 402ա, բ)։ Այդպես է նաև Գրիգոր Խլաթեցու խմբագրած Յայսմաւուրքի մեջ (տե՛ս Կ. Պոլիս, 1734, Բ, էջ 38)։

35 Ստորոգութիւն պատմութեան բազմերջանիկ սուրբ և փառաւորեալ հայրապետին Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի, յաւրինեալ ի տէր Մխիթար վարդապետէ, յեպիսկոպոսէ սուրբ ուխտին Այրիվանեաց.—Գ. Հովսեփյան. Մխիթար Այրիվանեցի, 1931, էջ 11—13։

նատի վանքը. այն բազիլիկ մի կառույց է V—VII դդ. հիմնարկված, «ի դուռն որի» (հյուսիսային կողմում) 735 թ. հուլիսի 23-ին թաղում են Սյունեցուն[36]։

1215 թ. այն նորոգվում է Խաղբակի որդի Վասակի կողմից։ Այդ ժամանակ վանքի առաջնորդն էր հայր Սարկավագը։ Թանատի վանքը երկրորդ անգամ նորոգվում է 1270-ական թթ., Խալայշահի կողմից, ուրեմն՝ ս. Ստեփաննոսի շիրիմը նորոգելու ժամանակ[37]։

Թանատին վերաբերող ձեռագրական երկու վկայություն ունենք։ 1284 թ. Գնդեվանքում ավարտված մի ձեռագրի հիշատակարանում, որը գրել է ստացող Վարդան վարդապետը, նշվում է, թե այն գրվել է «ձեռամբ սրբասնեայ և պատուական Յովանէսի, ի սուրբ ուխտէն, որ կոչի Թանատի վանք, որ մեծաւ աշխատութեամբ գրեաց զսայ եւ նկարեաց ըստ իւրում կարողութեան»[38]։ Երկրորդը նույն Հովհաննեսի ձեռքով Թանատի վանքում 1286 թ. ավարտված նարեկն է, գրված «բարեպաշտ և առքայուհի պարծանաց» պարոն Թաճեռի պատվերով, որպես «լապտեր անշիջանելի, զի արկցէ զսայ աստուածային երկնաւոր յառագաստն Հայրենեաց, և երկար կենդանութիւն և բարեխաւս առ տէր իւրս և պատուական գլխոյն իւրոյ աստուածադաւր իշխանաց իշխանին Հասանայ որդւոյն Պռոշայ...» Հովհաննեսը գրում է, «որ յաշխատութեամբ կատարեցի զհրաման մարմնաւոր տեարց»[39]։ Ինչպես տեսնում ենք, Թանատի վանքն ուներ իր արվեստավոր գրիչն ու նկարիչը, որը ոչ միայն գեղեցիկ արտագրում էր, այլև շարադրում էր Հիշատակարանը և նկարազարդում։ Եվ այս անում էր այն ժամանակ, երբ Աղբերց վանքում արդեն հավաքվել էին և՛ հմուտ գրիչներ, և՛ նկարիչներ ու վարդապետներ։ Թաճերը իր վանքի, իր «հայրենի տան Թանատի» փորձված գրչին էր վստահում։

Ստեփանոս Օրբելյանը երկու անգամ հիշատակում է Թանատի վանքը երկու տարբեր ձևով. երբ այն վերցնում է հին ցանկերից, գրում է «Թանատէ»[40], իսկ երբ բնույթով նույնացնում է Ծղուկի Թանահատին (որը նույնպես երկու անգամ է հիշատակում)[41], գրում է «Թանահատ»[42]։ Սակայն հնագույն վկայաբանություններում, ձեռագրական հիշատակարանում և վանքի արձանագրություններում[13] միշտ գրվում է «Թանատի» ձևով։ Այս հարցի առթիվ Ղ. Ալիշանը գրում է. «Այսպէս («Թանատէ»—Ա. Մ.) գրեն և՛ Յայսմաւուրք, Վարդան և Կիրակոս պատմիչք, և՛ հնագոյնն Թովմա Արծրունի՝ Թանադայ կամ Թանատի վանք... Իսկ Օրբելեան ի Պատմութեան անդ Թանահատի գրէ... որով առթէ շփոթս»[44]։

Ուրեմն Թանահատի վանք է կոչվում Ծղուկ գավառի (Սիսիանի շրջան) հնագույն վանքը, իսկ Վայոց ձոր գավառինը՝ Թանատի վանք, որի անվանը չի վերաբերում Օրբելյանի կողմից տրված նախորդի հետ նույնացնող բացատրությունը[45]։ Ղ. Ալիշանի կառծիքով «թերևս երկոցուն ևս տեղեացն՝ ի հեթանոսական դարս նուիրեալ Անահտի դիցուհոյ»[46]։

---

36 Ս. Սաղումյան. Նորահայտ վիմագրեր Խաղբակյան տոհմի մասին. ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1977, № 9, էջ 92—93։

37 Ի. Զարիբյան. Գլաձոր. Երևան, 1983, էջ 112։

38 Ս. Տեր-Ավետիսյան. Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի. Վիեննա, 1970, էջ 50։

39 ՄՄ, ձեռ. № 5135, ձեռագրի մասին տե՛ս ասա, էջ 24—25։

40 Ստեփանոս Օրբելյան. Պատմութիւն տանն Սիսական. Թիֆլիս, 1912, էջ 340։

41 Նույն տեղում, էջ 160, 338։

42 Նույն տեղում, էջ 143։

43 Դիվան հայ վիմագրության. պրակ III, էջ 76, 80, 82, 87։

44 Ղ. Ալիշան. Սիսական, էջ 119։

45 Ստեփանոս Օրբելյան, էջ 338։

46 Վարդանի «Աշխարհագրութեան» ձեռագրերից մեկում Թանատեի փոխարեն գրված է «ի անհատի»։ Արդյոք «Անահտի» անվան ճիշտ սրբագրությո՞ւն է, թե պատահականություն (ՄՄ, ձեռ. № 5148, էջ 228բ)։

1273—1279 թթ. Պռոշյանի որդիները և մտերիմները Թանատեի մոտ թաղված Սյունեցու շիրիմի վրա կառուցում են եկեղեցի, «եւ եդին տապան սրբոյն ի հիմն նորա»։

Սյունեցու շիրիմը կամ նշխարները գտնվում են Թանատի վանքում. «Նշխարն Սիւնեաց տէր Ստեփանոսին եդեալ ի վանս Թանահատին», այսինքն Սյունյաց տեր Ստեփանոսի նշխարները դրված են Թանահատի վանքում»։ Ուրեմն Մաթեոս գրիչը «շիրիմըն Սիւնեցի» արտահայտության փոխարեն հանգիստ խղճով կարող էր գրել «ի վանս Թանատէի», որովհետև նա այդ իրավունքն ուներ, Սյունեցու շիրիմը Թանատեի վանքում էր և Աղբերց վանքը գտնվում էր այդ վանքի մոտ։ Սյունեցին Մաթեոս քահանային ծանոթ էր նաև Իսրայելի և Կիրակոսի Հայսմավուրքներից, որոնց մեջ «Հրոտից ԺԷ և յուլիս ԻԳ օրվա տակ գրված է. «Ի սոյն աւուր վկայութիւն որբոյն Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի»[47]։

Վայոց ձորն էլ նրա համար Սյունեցու շիրիմն ամփոփող վայր էր, նա, ուրեմն, այդպես էլ գիտեր Կիլիկիայում։ Իսկ այստեղ, երբ իր ուսումնավայրը նրա մոտ էր, արձանագրում է այդ փաստը։ Թանատեի այդ եկեղեցին Սյունեցու անունով կոչվում է Սուրբ Ստեփանոս կամ Սուրբ Հայրապետ։ Այն կոչվում է նաև, ինչպես տեսանք, «շիրիմըն Սիւնեցի», ապա՝ «Սուրբ Ստեփանոսի գերեզմանն», «յարկ սուրբ Ստեփանոսի», «մատուռ», «քաւարան»։ Որմերի արձանագրություններում այն, իրեն կից Ս. Նշանի հետ միասին կոչվում է Թանատի վանքեր, և որովհետև երկուսն էլ Պռոշյանների կառույցն են՝ «Հայրենի տանս մեր Թանատի վանաց, առաջի Վարագա սբ Նշանիս եւ սուրբ Հայրապետիս»։ Այսպիսով, Թանատի բազիլիկ եկեղեցին Պռոշյանների ջանքերով համալրվեց նոր եկեղեցիներով։

Կենսաբեր Ս. Նշան կամ Վարագա Ս. Նշան.—կառուցված է Թանատի Ս. Ստեփանոսին կից, հյուսիսային կողմում, վերջինիս հյուսիսային պատը ծառայում է Ս. Նշանին որպես հարավային պատ։ Շինարարության թվականը հայտնի չէ, բայց Ս. Բարխուդարյանը գտնում է, որ Ս. Ստեփանոսին ժամանակակից է, կառուցված է հավանաբար 1290-ական թթ.։ Առաջին անգամ հիշատակվում է Ս. Ստեփանոսի արևմտյան մուտքի կամարակող քարի վրա 1307 թ. գրված արձանագրության մեջ. «Թվին ՉԾԶ (1307), կամաւն Աստուծոյ ես Թաճերս, դուստր Ուքանա, ամուսին Հասանա ասպարապետին Հաց, որդոյն Պռոշա ետու ընծա ի հալալ ընչից իմոց, հայրենի տանս մեր Թանատի վանաց՝ առաջի Վարագա սուրբ Նշանիս և սուրբ Հարապետիս»[48]։ Իսկ ձեռագրերում հիշվում է 1318 թվականից։

Թաճերը «ամուսին Հասանա ասպարապետի Հաց» իր արդար վաստակից նվեր է տալիս իրենց հայրենի տանը։ Պռոշի որդի Հասան սպարապետը մահացել է 1292 թ.։ Արդյոք ամուսնու մահից հետո նրա հիշատակին կառուցված չէ՞ այդ վանքը, կոչված Ս. Նշան, որպես Հայրենիքի համար հաղթանակներ շնորհող զորավոր նշան, որպիսին գիտակցվում է Վարագա սուրբ Նշանը՝ «ի պահպանութիւն և փոկութիւն աշխարհիս Հայոց»[49], որին այնպես ծառայել է Թաճերի ամուսին Ամիր Հասանը։ Ամիր Հասանի մասին կարդում ենք. «Այն որ ի բազում պատերազմունս արիաբար հանդիսանայր և քաջապէս թշնամիք խաչին Քրիստոսի (Սուրբ Նշան Վարագա—Ա. Մ.) դիմաթաւալ դերկիր կործանէր, և քաջ անուն ունձին և ազգին ժառանգէր, և պարգևս և պատիւս ի թագաւորացն ընդունէր... Եւ նա յառաջանայր աւրըստաւրէ ի գործ քաջութեան և յամենայն պատերազմունս անուանի լեալ ի համադասան, մինչև լուր համ-

---

47 ՄՄ, ձեռ. № 6283, էջ 242ա։ Ձեռ. № 7433, էջ 102ա-ում (Կիրակոս) խորագիրն է. «Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի»։

48 Ս. Բարխուդարյան. Դիվան, էջ 72։

49 «Այսմաւուրք», Կ. Պոլիս, 1730, էջ 493։

բաւոյն նորա տարածեցաւ ընդ աշխարհս բազումս, որ և եհաս մինչև յաշխարհս Հռովմայեցւոց և Յունաց»[50],— գրում է ժամանակակիցը։

Սուրբ Նշանը Ամիր-Հասանի մահից հետո (1292 թ.) կառուցված և Պռոշյանների զինական փառքին նվիրված լինելու օգտին է խոսում սույն վանքի մուտքի կամարակալ քարի վրայի բարձրաքանդակը՝ սպառազեն հեծյալը շրջապատված առյուծներով։

Վայոց ձոր գավառի Աղբերց-Գլաձոր Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը, Թանատի վանքը, Թանատի Ս. Ստեփանոս Սյունեցու գերեզմանը և Վարագա Ս. Նշան վանքը առանձին-առանձին ներկայացրինք, որպեսզի ընթերցողը տեսնի, որ նրանք առանձին միավորներ են, և խմբավորվում են երկու տեղ.

ա. Աղբերց-Գլաձորի Ս. Ստեփանոս Նախավկայի վանք։

բ. Թանատի վանք, Թանատի Ս. Ստեփանոսի գերեզման-վանք, Թանատի Ս. Նշան վանք։

Նկատենք, որ Աղբերց վանք-Գլաձորի հետ միշտ հիշվում է Եսայի Նչեցին, որպես ռաբունապետ, նաև՝ ուխտի առաջնորդ, իսկ վանքը՝ «մենաստան», «գերահռչակ ուխտ», «երկրորդ Աթէնք», «մեծ դպրատուն», «մայր իմաստից», «մայրաքաղաք ամենայն իմաստից», «համալսարան», «աթոռ և վարժարան սուրբ վարդապետաց մերոց»։ Իսկ Թանատի վանքերը՝ «սպասաւորք խոստացան», մեծ մասամբ՝ «միաբանքս սահմանեցին», նաև «վարդապետն և միաբանքս սահմանեցին» նվիրատվության դիմաց կատարվող պատարագի օրը։ Ս. Ստեփանոսի վանքը կոչվում է «մատուռ», «յարկ սրբոյն Ստեփանոսի», «քաւարան», «գերեզման սուրբ Ստեփանոսի», իսկ Ս. Նշանի հետ միասին Պռոշյանները ընծան տալիս են «Հայքենի տանս մեր Թանատի վանաց...». Գլաձորի Ս. Ստեփանոս Նախավկայի հետ մեկական անգամ հիշում են Ս. Ներսես վարդապետի դամբարանը, Ս. Աստվածածնի և Ս. Գրիգորի վանքերը և երկու անգամ Վարագա Ս. Նշանը, որպես Գլաձորի մոտ գտնվող վանքեր։

Այս ցույց է տալիս, որ Աղբերց վանք-Գլաձորը գտնվել է Թանատի (Սյունեցու շիրիմ-Վարագա Ս. Նշան), Հերմոնի (Ս. Գրիգոր) և Բոլորաբերդի կամ Պռոշաբերդի (Սպիտակավոր Ս. Աստվածածին) վանքերի մոտակայքում, որ «հուպ ի շիրիմն Սիւնեցի ի յԱղբերց վանս մենաստանի» նշանակում է ոչ թե «Սյունեցու շիրիմը Աղբերց վանքում է», այլ «Սյունեցու շիրիմին մոտ, Աղբերց վանք մենաստանում», ինչպես «ի քաղաքս Ղարս կոչեցեալ, հուպ ի Շիրակայս Անու»[51], ոչ թե Ղարսը Անին է, այլ Ղարսը Շիրակի Անիի մոտ է, կամ «ի գիւղն... Օձուն, որ հուպ է առ քաղաքին Լոռէ»[52], ոչ թե Օձունը Լոռի քաղաքն է, այլ Օձունը Լոռի քաղաքի մոտ է։

Ահա մատենագրական, վիմագրական այն նյութերը, որոնք նշում են Գլաձորի համալսարանի գտնվելու գավառը՝ Վայոց ձոր, վանքը՝ Աղբերց վանք և մոտավոր տեղը՝ Թանահատի Սպիտակավոր Ս. Աստվածածնի և Հերմոնի Ս. Գրիգոր վանքերի մոտակայքում։

Աղբերց-Գլաձոր վանքում թաղված են մեծ ռաբունապետներ Ներսես Մշեցին և Եսայի Նչեցին։ Նրանց տապանագրերով դամբարաններն էլ Գլաձորի համալսարանի ստույգ տեղը ցույց կտան, որին հնարավոր է հասնել պեղումների միջոցով։

---

50 «Արարատ», Կաղարշապատ, 1876, էջ 411—412։

51 ՄՄ, ձեռ. № 7010, էջ 286ա։

52 Կիրակոս Դանձակեցի. Պատմութիւն Հայոց. Երևան, 1961, էջ 70։

НОВЫЕ СВЕДЕНИЯ О ГЛАДЗОРСКОМ УНИВЕРСИТЕТЕ
(К 700-летию основания)

А. С. МАТЕВОСЯН

Резюме

Годом основания Гладзорского университета в армянской филологии считался 1280-й, что обосновывалось памятной записью одной рукописи, написанной для вардапета Нерсеса. Однако в этой памятной записи не указано место создания рукописи. В статье, на основании вновь выявленной памятной записи другой армянской рукописи, написанной для того же Нерсеса в 1281 г., а также других свидетельств, уточняется время основания Гладзорского университета. Весной 1282 г. вардапет Нерсес уже находился в Вайоц-Дзоре, в монастыре Ахперц, который в дальнейшем стал именоваться Гладзор.

Относительно местонахождения Гладзорского университета ценные данные имеются в свидетельствах его выпускников. Согласно этим свидетельствам, монастырь Ахперц находился близ могилы Степаноса Сюнеци, который был похоронен в монастыре Танат. Некоторые ученые пытаются отождествить Танат с монастырем Ахперц—с Гладзором, для чего нет никаких оснований. На материале кодикологических и эпиграфических данных в статье доказывается, что эти два монастыря существовали независимо друг от друга. А поскольку в письменных источниках новых данных пока не выявлено, место, где находился Гладзорский университет (монастырь Ахперц), можно определить лишь на основании новых археологических раскопок.